



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ**

ք. Երևան

15.10.2021թ.

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**  
**ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ**  
**ՔՆՆՈՂ ԱՆՁԻ**  
**թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/85**

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի  
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ Եղվարդի համայնքապետարան  
Բողոք բերող՝ «Լայթինգ Ալեք» ՍՊԸ

Մասնակցությամբ՝  
Եղվարդի համայնքապետարանի ներկայացուցիչ՝ Վ. Վիրաբյանի  
«Լայթինգ Ալեք» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Ֆ. Մանգյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝  
«ԿՄԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/1» ծածկագրով բաց մրցույթ, Եղվարդ քաղաքի մի շարք  
փողոցների արտաքին լուսավորության ցանցի կառուցման աշխատանքների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ  
քննող անձ), քննության առնելով «Լայթինգ Ալեք» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն)  
կողմից 15.09.2021թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ Բողոք) և կից  
փաստաթղթերը,

**Պ Ա Ր Զ Ե Ց**

## **1. Գործի նախապատմությունը.**

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է՝ պարտավորեցնել Եղվարդի համայնքապետարանի Եղվարդ քաղաքի մի շարք փողոցների արտաքին լուսավորության ցանցի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված թիվ «ԿՄԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/1» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին ընդունելու «Լայն Ափ» ՍՊԸ-ի հայտը բավարար գնահատելու, ընտրված մասնակից ճանաչելու և պայմանագիր կնքելու մասին որոշումները դադարեցնելու մասին համապատասխան որոշում:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 15.09.2021թ.-ին:

16.09.2021թ.-ին [www.gnumner.am](http://www.gnumner.am) կայքում հրապարակված հայտարարությամբ բողոքը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/85 համարի ծածկագիրը:

22.09.2021թ.-ին և 15.10.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 22.09.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 15.10.2021թ.-ին:

## **2. «Լայթինգ Ալեք» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.**

«Լայթինգ Ալեք» ՍՊԸ-ն 15.09.2021թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

*«1.1. ՀՀ Կոտայքի մարզի Եղվարդի համայնքապետարանը (այսուհետ՝ նաև՝ Պատվիրատու) իր կարիքների համար «մի շարք փողոցների արտաքին լուսավորության ցանցի կառուցման աշխատանքների» ձեռքբերման նպատակով 19.07.2021 թվականին հրապարակել է թիվ «ԿՄԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/1» բաց մրցույթը (այսուհետ՝ նաև՝ ընթացակարգ):*

*1.2. Գնման ընթացակարգի 1-ին չափաբաժնի շրջանակում հայտ են ներկայացրել նաև «ԼԱՅՆ ԱՓ» ՍՊ Ե «ԼԱՅԹԻՆԳ ԱԼԵՔ» ՍՊ ընկերությունները (այսուհետ՝ Մասնակից): Մասնակցի կողմից գնման ընթացակարգի շրջանակում ներկայացված հայտը գնահատվել է բավարար և ճանաչվել է ընտրված մասնակից, որը փաստվում է գնման ընթացակարգի հանձնաժողովի 03.09.2021 թվականի թիվ 3 արձանագրությամբ:*

*1.3. Վերը նշված որոշման արդյունքում 2021-09-06-ից սահմանվել է անգործության ժամկետ 10 օրացուցային օր ժամկետով, մինչև՝ 2021-09-16-ը ներառյալ:*

1.4. Գնման ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով «ԼԱՅՆ ԱՓ» ՍՊ ընկերության հայրը ներկայացվել է հրավերի պահանջների խախտմամբ: Մասնավորապես «ԼԱՅՆ ԱՓ» ՍՊ ընկերության գնային առաջարկը 1-ին չափաբաժնի մասով չի համապատասխանում հրավերի պահանջներին, քանզի վերջինս թիվ 2 հավելվածով ներկայացված գնային առաջարկով լրացրել է ԱԱՀ-ը տողը, սակայն վերջինս չի հանդիսանում ավելացված արժեքի հարկ վճարող /ապացույցը կցվում է/:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի Օրենքի 34-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձին տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Ընդ որում, մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն մասում նշված հարկի գումարի հաշվարկման:

ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի թիվ 526-Ն որոշման հավելված 1-ով հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի (այսուհետ՝ Կարգ) 32-րդ կետի 2-րդ մասի դ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման: Ընդ որում, մասնակցի հայրը ենթակա չէ մերժման, եթե գնային առաջարկի արժեք, ավելացված արժեքի հարկ և ընդհանուր գումար սյունակներում տրամաբան կամ թվերով նշված գումարների լումաները կլորացված են մինչև հինգ տասնորդականը՝ դեպի ներքև ամբողջ թիվը, իսկ հինգ տասնորդական և դրանից ավելին դեպի վերև ամբողջ թիվը:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայրերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայրերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի:

Թիվ «ԿՄԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/1» բաց մրցույթի հրավերի 5.2. կետի համաձայն՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխադրված շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը փոխադրված գծով շայասաանի հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա ներկայացվող գնային առաջարկում առանձնացված փողով նախադրվում է այդ հարկաեսակի գծով վճարվելիք գումարի չափը:

Վերոհիշյալ իրավական նորմերի վերլուծությունից պետք է փաստել հետևյալը, որ մասնակիցների կողմից ներկայացվող հայտերը պետք է համապատասխանեն հրավերի պահանջներին, որի բաղկացուցիչ մաս է նաև գնային առաջարկը: Այն դեպքերում, երբ մասնակիցների կողմից ներկայացվող գնային առաջարկները չեն համապատասխանում հրավերի պահանջներին, ապա այն առաջ է բերում նրանց հայտերի մերժման իրավական հիմքերը, որը հայտերը գնահատող հանձնաժողովի համար պարտականություն է:

Նշվածը համադրելով սույն գործի փաստերի հետ՝ պետք է արձանագրել հետևյալը, որ «ԼԱՅՆ ԱՓ» ՍՊ ընկերության կողմից թիվ «ԿՄԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/1» գնման ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով ներկայացված գնային առաջարկը ներկայացվել է հրավերի պահանջներին անհամապատասխան, մասնավորապես վերջինս չհանդիսանալով ԱԱՀ վճարող, թիվ 2 հավելվածով գնային առաջարկով, լրացրել է նաև ավելացված արժեքի հարկը գումարը, ինչը հակասում է վերը նշված օրենսդրական նորմերին:

Այսինքն մասնակցի գնման ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով ներկայացված գնային առաջարկը չի համապատասխանում հրավերի պահանջներին վերջինիս հայտը ենթակա էր մերժման: Նշվածի արդյունքում թիվ «ԳՄԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/1» բաց մրցույթի արդյունքում «ԼԱՅՆ ԱՓ» ՍՊ ընկերությանը ընտրված մասնակից ճանաչելու և դրա արդյունքում պայմանագիր կնքելու մասին որոշումը ոչ իրավաչափ են:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ թիվ «ԿՄԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/1» բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի ոչ իրավաչափ գործողության արդյունքում 03.09.2021 թվականի թիվ 3 արձանագրությամբ բավարար է գնահատվել «ԼԱՅՆ ԱՓ» ՍՊ ընկերության հայտը և հայտարարվել է անգործություն, պետք է փաստեր որ որոշումները ընդունվել են օրենքի խախտմամբ:

Գնումների մասին ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն Գնումների գործընթացը հիմնվում է հետնյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում:

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Վերոհիշյալ նորմի մեկնաբանմամբ պետք է փաստեր որ օրնսդրի կողմից սահմանված սկզբունքների ապահովումը, այն է, պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսումը հնարավոր կլինի միայն այն դեպքում, երբ արհեստականորեն խոչընդոտներ չեն ստեղծվի գնման ընթացակարգի շրջանակում մատակարարվող ապրանքի ներմուծող կազմակերպությունների համար և արդյունքում կունենանք իրավահավասար և ոչ խտրական հիմունքներով կազմակերպված գնման ընթացակարգ:»:

Ելնելով վերոգրյալից՝ «Լայթինգ Ալեք» ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձին խնդրել է պարտավորեցնել Եղվարդի համայնքապետարանի Եղվարդ քաղաքի մի շարք փողոցների արտաքին լուսավորության ցանցի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված թիվ «ԿՄԵԲ-ԲՄԱՇՁԲ-21/1» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին ընդունելու «Լայն Ափ» ՍՊԸ-ի հայտը բավարար գնահատելու, ընտրված մասնակից ճանաչելու և պայմանագիր կնքելու մասին որոշումները դադարեցնելու մասին համապատասխան որոշում:

Ի լրումն «Լայթինգ Ալեք» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի, Ընկերությունը 14.10.2021թ.-ին ներկայացված դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ Կոտայքի մարզի Եղվարդի համայնքապետարանը իր կարիքների համար «մի շարք փողոցների արտաքին լուսավորության ցանցի կառուցման աշխատանքների» ձեռքբերման նպատակով 19.07.2021 թվականին հրապարակել է թիվ «ԿՄԵԲ-ԲՄԱՇՁԲ-21/1» բաց մրցույթը:

«ԼԱՅՆ ԱՓ» ՍՊ ընկերության կողմից գնման ընթացակարգի շրջանակում ներկայացված հայտը գնահատվել է բավարար և ճանաչվել ընտրված մասնակից, որը արձանագրվել է գնահատող հանձնաժողովի 03.09.2021թ.-ի թիվ 3 արձանագրությամբ:

Սակայն «ԼԱՅՆ ԱՓ» ՍՊ ընկերության հայտը չի համապատասխանել հրավերի պահանջներին, քանի որ վերջինս փյույվ գործարքի գծով ՀՀ պետական բյուջե ավելացված արժեքի հարկ (ԱԱՀ) վճարող չի հանդիսացել հայտը ներկայացնելու պահի դրությամբ, ինչը

փաստում է ՀՀ ՊԵԿ-ի կողմից տրամադրած պարզաբանման մեջ, բայց Մասնակիցը գնային առաջարկում նշել է, որ հանդիսանում է ԱԱՀ վճարող և ավելին, նշել է գումարը, հետևաբար ներկայացրել է սխալ և իրականությանը չհամապատասխանող փաստաթուղթ, այն է՝ գնային առաջարկ: Հրավերի պահանջների համաձայն մասնակցի հայտը ենթակա չէ մերժման մի քանի բացառություններով, որոնցից ոչ մեկը չի կարող տարածվել «ԼԱՅՆ ԱՓ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված՝ իրականությանը չհամապատասխանող, գնային առաջարկի վրա, ինչով պայմանավորված Գնահատող հանձնաժողովը պետք է մերժեր Մասնակցի կողմից ներկայացրած գնային առաջարկը:

«ԼԱՅՆ ԱՓ» ՍՊ ընկերությունը ԱԱՀ վճարող համարվելու վերաբերյալ դիմում է ներկայացրել ՀՀ ՊԵԿ միայն 17.09.2021 թ.-ին՝ ԳԲԲԱ-ԼՕ-2021/85 ծածկագրով բողոքարի վերաբերյալ ծանուցումը ստանալուց անմիջապես հետո:

«ԼԱՅՆ ԱՓ» ՍՊ ընկերությունը օգտվել է ՀՀ Հարկային օրենսգրքի համապատասխան հոդվածից և սահմանված ժամկետում փորձել է դառնալ ԱԱՀ վճարող հետին ամսաթվով, սակայն նման նախադեպը պարունակում է ոչ մրցակցային ռիսկեր, քանի որ «ԼԱՅՆ ԱՓ» ՍՊԸ-ն կարող էր ԱԱՀ վճարող դառնալ նաև մրցույթի այն փուլում, երբ պետք է հաշիվ ապրանքագիր դուրս գրել և ոչ մի պատասխանավորություն չկրեր:

Գնային առաջարկ ներկայացնելու պահին աշխատանքի արժեքը ԱԱՀ-ով ներկայացնելը հնարավորություն է տալիս՝ արհեստական կերպով, առանց ԱԱՀ գործունեություն ծավալող ընկերությանը արհեստական գնիջեցում կատարել գնառաջարկի ժամանակ, աշխատանքները կատարել առանց ԱԱՀ-ի, իսկ հաշիվ-ապրանքագիր դուրս գրելուց դառնալ ԱԱՀ վճարող:

Վերոնշյալ նախադեպը պարունակում է ոչ մրցակցային բարձր ռիսկ, ինչի արդյունքում խախտվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածով սահմանված սկզբունքները:

Այսպիսով «ԼԱՅՆ ԱՓ» ՍՊ ընկերությունը պնդում է ներկայացված բողոքը և խնդրում է պարտավորեցնել թիվ «ԿՄԵԲ-ԲՄԱՇՁԲ-21/1» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին չեղարկելու՝ «ԼԱՅՆ ԱՓ» ՍՊ ընկերության հայտը բավարար գնահատելու, ընտրված մասնակցից ճանաչելու և պայմանագիր կնքելու մասին որոշումները:»:

**3. Եղվարդի համայնքապետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.**

Բողոքներ քննող անձը 16.09.2021թ.-ին թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/15078-2021 գրությամբ դիմել է Եղվարդի համայնքապետարանին (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Լայթինգ Ալեք» ՍՊԸ-ի կողմից 15.09.2021թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր դիրքորոշումը:

Պատվիրատուն ստանալով գրավոր դիրքորոշում հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին:

Պատվիրատուն 23.09.2021թ.-ին ներկայացված թիվ 1774 գրությամբ ներկայացրել է «ԿՄԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/1» ծածկագրով գնման ընթացակարգի համապատասխան փաստաթղթերի պատճենները և գրավոր դիրքորոշում, հայտնելով հետևյալը.

*«ՀՀ Կոտայքի մարզի Եղվարդի համայնքապետարանը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) իր կարիքների համար Եղվարդ քաղաքի մի շարք փողոցների արտաքին լուսավորության ցանցի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով 19.07.2021թվականին հրապարակվել է «ԿՄԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/1» բաց մրցույթ (այսուհետ նաև՝ ընթացակարգ):*

*Հայտերը բացվել են էլեկտրոնային ձևով գնումների իրականացումը ապահովող համակարգի (այսուհետև՝ համակարգ)՝ [www.armeps.am](http://www.armeps.am) կայքի միջոցով՝ 2021թվականի օգոստոսի 30-ին ժամը 10:00-ին: Սահմանված ժամկետում հայտեր են ներկայացրել թվով տասնմեկ մասնակից՝ այդ թվում նաև «ԼԱՅՆ ԱՓ» և «ԼԱՅԹԻՆԳ ԱԼԵՔ» ՍՊԸ-ները:*

*«ԿՄԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/1» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերում արձանագրել է անհամապատասխանություններ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը, որոշել է կասեցնել սույն նիստը և ծանուցել մասնակիցներին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շփոթել անհամապատասխանությունները: Հանձնաժողովի հաջորդ նիստի օր նշանակելով սեպտեմբերի 2-ին ժամը 17:00-ին:*

*«ԿՄԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/1» ծածկագրով բաց մրցույթ ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ուսումնասիրելով մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերը հանձնաժողովի անդամների կողմից իրականացված հայտերի գնահատման արդյունքները հանձնաժողովը որոշել է Եղվարդ համայնքի կարիքների համար Եղվարդ քաղաքի մի շարք*

փողոցների արտաքին լուսավորության ցանցի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով բաց մրցույթի ընտրված մասնակից ճանաչել «ԼԱՅՆ ԱՓ» ՍՊԸ-ին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ հաստատվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը և սահմանվել է անգործության ժամկետ՝ հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացույցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

«Գնումների մասին» օրենքի 34-րդ հոդվածի՝

1. Հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են, այդ նույն հոդվածի 3-րդ կետով էլ ասվում է՝ եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձին տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Ընդ որում, մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն մասում նշված հարկի գումարի հաշվարկման:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 2-րդ մասի դ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա ներկայացվող գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը:

Մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն կետում նշված հարկի գումարի հաշվարկման:

«ԼԱՅՆ ԱՓ» ՍՊԸ-ի հայտը «ԿՄԵԲ-ԲՄԱՇՁԲ-21/1» ծածկագրով բաց մրցույթ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել է բավարար, քանի որ այն բավարարում է «ԿՄԵԲ-ԲՄԱՇՁԲ-21/1» ծածկագրով բաց մրցույթ հրավերի պահանջներին:

Ինչ վերաբերվում է տվյալ մասնակցի տվյալ պահին գործող հարկման տեսակին.

ՀՀ հարկային օրենքի 59-րդ հոդվածի՝ ԱԱՀ վճարողներ են համարվում սույն հոդվածի 4-րդ մասի 1-ին կետին համապատասխան հարկային մարմնում որպես ԱԱՀ



վճարող հաշվառված կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը և նոտարները՝ հետևյալ դեպքերում և ժամկետներում:

2) Հարկային փարվա ընթացքում պետական գրանցում ստացած (օրենքով սահմանված դեպքերում՝ հաշվառված) կազմակերպությունը կամ որպես անհատ ձեռնարկատեր հաշվառված կամ որպես նոտար նշանակված ֆիզիկական անձը՝ համապատասխանաբար, պետական գրանցման (օրենքով սահմանված դեպքերում՝ հաշվառման) կամ որպես անհատ ձեռնարկատեր հաշվառման կամ որպես նոտար նշանակման օրվանից մինչև տվյալ հարկային փարվա ավարտը, եթե հարկ վճարողը համապատասխանաբար պետական գրանցման (օրենքով սահմանված դեպքերում՝ հաշվառման) կամ որպես անհատ ձեռնարկատեր հաշվառման կամ որպես նոտար նշանակման օրվա դրությամբ, Օրենսգրքի 13-րդ բաժնի համաձայն, չի կարող համարվել շրջանառության հարկ վճարող կամ Օրենսգրքի 13-րդ բաժնով սահմանված ժամկետում հարկային մարմին չի ներկայացրել հարկային մարմնի հաստատած ձևով շրջանառության հարկ վճարող համարվելու և հարկային մարմնի հաստատած ձևով միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու վերաբերյալ հայտարարություն.

3) Հարկային փարվա ընթացքում որպես միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելուց դադարած կազմակերպությունը կամ անհատ ձեռնարկատերը՝ որպես միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելուց դադարելու օրվանից մինչև տվյալ հարկային փարվա ավարտը, եթե հարկ վճարողը որպես միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելուց դադարելու օրվա դրությամբ, Օրենսգրքի 13-րդ բաժնի համաձայն, չի կարող համարվել շրջանառության հարկ վճարող կամ Օրենսգրքի 13-րդ բաժնով սահմանված ժամկետում հարկային մարմին չի ներկայացրել հարկային մարմնի հաստատած ձևով շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն: Սույն կետով սահմանված դեպքերում որպես միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելուց դադարելու օրվանից մինչև այդ օրվան հաջորդող 20-րդ օրը ներառյալ հարկ վճարողը հարկային մարմին է ներկայացնում հարկային մարմնի հաստատած ձևով՝ ԱԱՀ վճարող համարվելու և որպես ԱԱՀ վճարող հաշվառվելու վերաբերյալ հայտարարություն (այսուհետ սույն բաժնում՝ հայտարարություն)՝ նշելով որպես միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելուց դադարելու համապատասխան հիմքը և օրը.

4) հայտարարությունում նշված օրվանից (բայց հայտարարությունը ներկայացնելու օրվան նախորդող 20-րդ օրվանից ոչ շուտ) մինչև հայտարարությունում նշված հարկային փարվա ավարտը, եթե հարկ վճարողը հարկային մարմին է ներկայացրել

հայտարարություն՝ նշում կատարելով ԱԱՀ վճարող համարվելու և որպես ԱԱՀ վճարող հաշվառվելու մասին: Եթե հարկ վճարողը, Օրենսգրքի 13-րդ բաժնի համաձայն, դադարում է համարվել շրջանառության հարկ վճարող մինչև հայտարարությունում նշված օրը, ապա շրջանառության հարկ վճարողը ԱԱՀ վճարող է համարվում սույն մասի 5-րդ կետով սահմանված կարգով (հայտարարությունը հաշվի չի առնվում): Եթե հարկ վճարողը, Օրենսգրքի 13-րդ բաժնի համաձայն, դադարել է համարվել միկրոձեռնարկատիրության սուբյեկտ մինչև հայտարարությունում նշված օրը, և եթե հարկ վճարողը, որպես միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելուց դադարելու օրվա դրությամբ, Օրենսգրքի 13-րդ բաժնի համաձայն, չի կարող համարվել շրջանառության հարկ վճարող կամ Օրենսգրքի 13-րդ բաժնով սահմանված ժամկետում հարկային մարմին չի ներկայացրել հարկային մարմնի հաստատված ձևով շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն, ապա միկրոձեռնարկատիրության սուբյեկտն ԱԱՀ վճարող է համարվում սույն մասի 3-րդ կետով սահմանված կարգով (հայտարարությունը հաշվի չի առնվում):

5) հարկային տարվա այն պահից մինչև տվյալ հարկային տարվա ավարտը, որ պահից հարկ վճարողը Օրենսգրքի 13-րդ բաժնի համաձայն, տվյալ հարկային տարում դադարում է համարվել շրջանառության հարկ վճարող: Ընդ որում, հարկային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառության 115 միլիոն դրամի շեմը (այսուհետք նաև՝ ԱԱՀ-ի շեմ) գերազանցելու հիմքով ԱԱՀ վճարող համարվելու դեպքում ԱԱՀ-ն հաշվարկվում և վճարվում է ԱԱՀ-ի շեմը գերազանցող մասով: Շրջանառության հարկ վճարող համարվելուց դադարելու հիմքերից որևէ մեկը տեղի ունենալու օրվանից մինչև այդ օրվան հաջորդող 20-րդ օրը ներառյալ հարկ վճարողը հարկային մարմին է ներկայացնում հայտարարություն՝ նշելով շրջանառության հարկ վճարող համարվելուց դադարելու համապատասխան հիմքը և օրը:

2. Սույն հոդվածի 4-րդ մասի 1-ին կետին համապատասխան հարկային մարմնում որպես ԱԱՀ վճարող հաշվառված ոչ առևտրային կազմակերպությունները և գյուղատնտեսական արտադրանք արտադրող կազմակերպություններն ու անհատ ձեռնարկատերերը ԱԱՀ վճարողներ են համարվում հետևյալ դեպքերում և ժամկետներում.

1) տվյալ հարկային տարվա հունվարի 1-ից մինչև տվյալ հարկային տարվա ավարտը, եթե կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ՝ Օրենսգրքի 254-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով հաշվարկվող՝ նախորդ հարկային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառությունը գերազանցել է 115 միլիոն դրամը.

2) հարկային տարվա այն պահից մինչև տվյալ հարկային տարվա ավարտը, որ պահին կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ՝ Օրենսգրքի 254-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով հաշվարկվող՝ գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառությունը գերազանցում է 115 միլիոն դրամը: Ընդ որում, հարկային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառության 115 միլիոն դրամի շեմը գերազանցելու հիմքով ԱԱՀ վճարող համարվելու դեպքում ԱԱՀ-ն հաշվարկվում և վճարվում է ԱԱՀ-ի շեմը գերազանցող մասով: Գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառության 115 միլիոն դրամը գերազանցելու օրվանից մինչև այդ օրվան հաջորդող 20-րդ օրը ներառյալ սույն մասում նշված հարկ վճարողը հարկային մարմին է ներկայացնում հայտարարություն՝ նշելով ԱԱՀ-ի շեմը գերազանցելու օրը:

3) հայտարարությունում նշված օրվանից (բայց հայտարարությունը ներկայացնելու օրվան նախորդող 20-րդ օրվանից ոչ շուտ) մինչև հայտարարությունում նշված հարկային տարվա ավարտը, եթե կազմակերպությունը կամ անհատ ձեռնարկատերը հարկային մարմին է ներկայացրել հայտարարություն՝ նշում կատարելով ԱԱՀ վճարող համարվելու և որպես ԱԱՀ վճարող հաշվառվելու մասին: Եթե սույն մասում նշված հարկ վճարողի՝ Օրենսգրքի 254-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգով հաշվարկվող՝ գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառության 115 միլիոն դրամը գերազանցում է մինչև հայտարարությունում նշված օրը, ապա սույն մասում նշված հարկ վճարողը ԱԱՀ վճարող է համարվում սույն մասի 2-րդ կետով սահմանված կարգով (հայտարարությունը հաշվի չի առնվում):

Եթե կազմակերպությունը կամ անհատ ձեռնարկատերը գյուղատնտեսական արտադրանքի արտադրության հետ միաժամանակ իրականացնում է նաև այլ գործունեություն, ապա ԱԱՀ վճարող է համարվում սույն հոդվածի 1-ին մասով սահմանված դեպքերում և ժամկետներով:

2.1 Սույն հոդվածի 4-րդ մասի 1-ին կետին համապատասխան՝ հարկային մարմնում որպես ԱԱՀ վճարող հաշվառված՝ հանրային սննդի ոլորտում գործունեություն իրականացնող կազմակերպություններն ու անհատ ձեռնարկատերերն ԱԱՀ վճարողներ են համարվում հետևյալ դեպքերում և ժամկետներում.

1) տվյալ հարկային տարվա հունվարի 1-ից մինչև տվյալ հարկային տարվա ավարտը, եթե Օրենսգրքի 13-րդ բաժնով սահմանված ժամկետում հարկային մարմին չի ներկայացրել հարկային մարմնի հաստատած ձևով շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն.

2) հարկային փարվա ընթացքում պետական գրանցում ստացած (օրենքով սահմանված դեպքերում՝ հաշվառված) կազմակերպությունը կամ որպես անհատ ձեռնարկատեր հաշվառված ֆիզիկական անձը՝ համապատասխանաբար, պետական գրանցման (օրենքով սահմանված դեպքերում՝ հաշվառման) կամ որպես անհատ ձեռնարկատեր հաշվառման օրվանից մինչև փյալ հարկային փարվա ավարտը, եթե հարկ վճարողն Օրենսգրքի 13-րդ բաժնով սահմանված ժամկետում հարկային մարմին չի ներկայացրել հարկային մարմնի հաստատված ձևով շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն.

3) հայտարարությունում նշված օրվանից (բայց հայտարարությունը ներկայացնելու օրվան նախորդող 20-րդ օրվանից ոչ շուրջ) մինչև հայտարարությունում նշված հարկային փարվա ավարտը, եթե հարկ վճարողը հարկային մարմին է ներկայացրել հայտարարություն՝ նշում կատարելով ԱԱՀ վճարող համարվելու և որպես ԱԱՀ վճարող հաշվառվելու մասին:

3. Սույն հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետին համապատասխան հարկային մարմնում որպես ԱԱՀ վճարող հաշվառված կազմակերպությունները ԱԱՀ վճարողներ են համարվում հայտարարությունում նշված օրվանից (բայց հայտարարությունը ներկայացնելու օրվան նախորդող 20-րդ օրվանից ոչ շուրջ) մինչև հայտարարությունում նշված հարկային փարվա ավարտը:

4. Հարկային մարմնում որպես ԱԱՀ վճարող չհաշվառված կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը և նույնիսկ չեն համարվում ԱԱՀ վճարողներ, սակայն Օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված՝ հարկման օբյեկտ համարվող գործարքներ և (կամ) գործառնություններ իրականացնելու դեպքում պարտավոր են Օրենսգրքով սահմանված կարգով, չափով և ժամկետներում հաշվարկել և պետական բյուջե վճարել այդ գործարքներից և (կամ) գործառնություններից առաջացող ԱԱՀ-ի գումարները, բացառությամբ սույն մասի երկրորդ պարբերությամբ սահմանված դեպքերի:

ԱԱՀ-ի հաշվարկման և վճարման համար հաշվետու ժամանակաշրջան է համարվում յուրաքանչյուր հաշվետու ամիսը:

ՀՀ հարկային օրենքի 254-րդ հոդվածի

1) հարկային փարվա ընթացքում պետական գրանցում ստացած առևտրային կազմակերպությունը կամ որպես անհատ ձեռնարկատեր հաշվառված կամ որպես նույնը նշանակված ֆիզիկական անձը՝ համապատասխանաբար, որպես կազմակերպություն պետական գրանցման կամ որպես անհատ ձեռնարկատեր հաշվառման կամ որպես նույնը նշանակման օրվանից մինչև փյալ հարկային փարվա ավարտը (բացառությամբ

Օրենսգրքի 59-րդ հոդվածով սահմանված՝ հարկային փարվա ընթացքում ԱԱՀ վճարող համարվելու դեպքի), եթե հարկ վճարողը մինչև համապատասխանաբար՝ որպես կազմակերպություն պետական գրանցման կամ որպես անհատ ձեռնարկատեր հաշվառման կամ որպես նույնպիսի նշանակման օրվան հաջորդող 20-րդ օրը ներառյալ հարկային մարմին է ներկայացրել հարկային մարմնի հաստատած ձևով հայտարարություն՝ շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ: Սույն կետի կիրառության իմաստով՝ վերակազմակերպման արդյունքում նոր ստեղծվող կազմակերպության կամ կազմակերպությունների (բացառությամբ միացման ձևով վերակազմակերպման դեպքում այն կազմակերպության, որին միանում են այլ կազմակերպություն կամ կազմակերպություններ և առանձնացման ձևով վերակազմակերպման դեպքում այն կազմակերպության, որից առանձնանում են այլ կազմակերպություն կամ կազմակերպություններ) համար պետական գրանցում է համարվում նաև կազմակերպությունների վերակազմակերպման պետական գրանցումը.

2) հարկային փարվա ընթացքում որպես միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելուց դադարած առևտրային կազմակերպությունը կամ անհատ ձեռնարկատերը՝ որպես միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելուց դադարելու օրվանից մինչև փյալ հարկային փարվա ավարտը (բացառությամբ Օրենսգրքի 59-րդ հոդվածով սահմանված՝ հարկային փարվա ընթացքում ԱԱՀ վճարող համարվելու դեպքի), եթե հարկ վճարողը որպես միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելուց դադարելու օրվանից մինչև այդ օրվան հաջորդող 20-րդ օրը ներառյալ հարկային մարմին է ներկայացրել հարկային մարմնի հաստատած ձևով հայտարարություն՝ շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ.

3) հարկային մարմնի հաստատած ձևով՝ շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարությունում նշված օրվանից (բայց այդ հայտարարությունը ներկայացնելու օրվան նախորդող 20-րդ օրվանից ոչ շուրջ) մինչև փյալ հարկային փարվա ավարտը (բացառությամբ Օրենսգրքի 59-րդ հոդվածով սահմանված՝ հարկային փարվա ընթացքում ԱԱՀ վճարող համարվելու դեպքի), եթե միկրոձեռնարկատիրության սուբյեկտը հարկային մարմին է ներկայացրել հարկային մարմնի հաստատած ձևով հայտարարություն՝ շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ: Եթե միկրոձեռնարկատիրության սուբյեկտը, Օրենսգրքի 268-րդ հոդվածի համաձայն, դադարում է համարվել միկրոձեռնարկատիրության սուբյեկտ մինչև հարկային մարմնի հաստատած ձևով՝ շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարությունում նշված օրը, ապա միկրոձեռնարկատիրության սուբյեկտը շրջանառության հարկ վճարող է համարվում

սույն մասի 3-րդ կետով սահմանված կարգով՝ որպես միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելուց դադարելու օրվանից՝ մինչև այդ օրվան հաջորդող 20-րդ օրը ներառյալ՝ հարկային մարմին ներկայացնելով հարկային մարմնի հաստատված ձևով նոր հայտարարություն՝ շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ (հարկային մարմնի հաստատված ձևով՝ շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ նախկինում ներկայացված հայտարարությունը հաշվի չի առնվում), իսկ այդ կետով սահմանված կարգով շրջանառության հարկ վճարող չհամարվելու դեպքում, Օրենսգրքի 59-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն, համարվում է ԱԱՀ վճարող.

4) մինչև հարկային տարվա փետրվարի 20-ը ներառյալ գործունեություն չիրականացրած (գործունեությունը դադարեցրած) առևտրային կազմակերպությունը կամ անհատ ձեռնարկատերը կամ նույնը գործունեությունը վերսկսելու օրվանից մինչև տվյալ հարկային տարվա ավարտը (բացառությամբ Օրենսգրքի 59-րդ հոդվածով սահմանված՝ հարկային տարվա ընթացքում ԱԱՀ վճարող համարվելու դեպքի), եթե հարկ վճարողը մինչև գործունեությունը վերսկսելու օրվան հաջորդող 20-րդ օրը ներառյալ հարկային մարմին է ներկայացրել հարկային մարմնի հաստատված ձևով հայտարարություն՝ շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ.

5) մինչև տվյալ հարկային տարին սկսվելը պետական հաշվառումից դուրս եկած անհատ ձեռնարկատերը կամ պաշտոնից ազատված նույնը տվյալ հարկային տարում կրկին որպես անհատ ձեռնարկատեր հաշվառվելու կամ կրկին որպես նշանակվելու օրվանից մինչև հարկային տարվա ավարտը (բացառությամբ Օրենսգրքի 59-րդ հոդվածով սահմանված՝ հարկային տարվա ընթացքում ԱԱՀ վճարող համարվելու դեպքի), եթե հարկ վճարողը մինչև կրկին որպես անհատ ձեռնարկատեր հաշվառվելու կամ կրկին որպես նույնը նշանակվելու օրվան հաջորդող 20-րդ օրը ներառյալ հարկային մարմին է ներկայացրել հարկային մարմնի հաստատված ձևով հայտարարություն՝ շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ.

6) հարկային տարվա ընթացքում պետական հաշվառումից դուրս եկած անհատ ձեռնարկատերը կամ պաշտոնից ազատված նույնը տվյալ հարկային տարում կրկին որպես անհատ ձեռնարկատեր հաշվառվելու կամ կրկին որպես նույնը նշանակվելու օրվանից մինչև հարկային տարվա ավարտը (բացառությամբ Օրենսգրքի 59-րդ հոդվածով սահմանված՝ հարկային տարվա ընթացքում ԱԱՀ վճարող համարվելու դեպքի), եթե հարկ վճարողը մինչև կրկին որպես անհատ ձեռնարկատեր հաշվառվելու կամ կրկին որպես նույնը նշանակվելու օրվան հաջորդող 20-րդ օրը ներառյալ հարկային մարմին է ներկայացրել հարկային մարմնի հաստատված ձևով հայտարարություն՝ շրջանառության

հարկ վճարող համարվելու վերաբերյալ, բացառությամբ այն դեպքերի, երբ անհատ ձեռնարկատերը փոխառնում է հարկային փոխարկի ընթացքում՝ մինչև պետական հաշվառումից դուրս գալը, կամ երբ նույնը փոխառնում է հարկային փոխարկի ընթացքում՝ մինչև պաշտոնից ազատվելը, Օրենսգրքի 59-րդ հոդվածի համաձայն, համարվել են ԱԱՀ վճարող:

5. Շրջանառության հարկ վճարող կարող են համարվել այն ռեզիդենտ առևտրային կազմակերպությունը, անհատ ձեռնարկատերը և նույնը, որոնց նախորդ հարկային փոխարկի ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառությունը չի գերազանցել 115 միլիոն դրամը: Սույն մասի կիրառության իմաստով՝

1) իրացման շրջանառությունը ներառում է նաև ընդհանրական ձեռնարկատիրության հարկման հատուկ համակարգերի շրջանակներում իրականացվող գործունեության տեսակներին վերագրվող իրացման շրջանառությունը.

2) առևտրային կազմակերպությունների վերակազմակերպման դեպքում հաշվի են առնվում հետևյալ առանձնահատկությունները.

ա. բաժանման ձևով կազմակերպության վերակազմակերպման դեպքում նոր ստեղծված կազմակերպություններից յուրաքանչյուրի համար նախորդ հարկային փոխարկի ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառություն է համարվում բաժանման ձևով վերակազմակերպված կազմակերպության նախորդ հարկային փոխարկի ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառությունը,

բ. առանձնացման ձևով կազմակերպության վերակազմակերպման դեպքում ինչպես այն կազմակերպության համար, որից առանձնացել են այլ կազմակերպություն կամ կազմակերպություններ, այնպես էլ առանձնացված կազմակերպության կամ կազմակերպություններից յուրաքանչյուրի համար նախորդ հարկային փոխարկի ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառություն է համարվում վերակազմակերպված կազմակերպության նախորդ հարկային փոխարկի ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառությունը,

գ. միաձուլման ձևով կազմակերպությունների վերակազմակերպման դեպքում նոր ստեղծված կազմակերպության համար նախորդ հարկային փոխարկի ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառություն է համարվում միաձուլված կազմակերպությունների նախորդ հարկային փոխարկի ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառությունների հանրագումարը,

դ. միացման ձևով կազմակերպությունների վերակազմակերպման դեպքում այն կազմակերպության համար, որին միացել են այլ կազմակերպություն կամ

կազմակերպություններ, նախորդ հարկային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառություն է համարվում տվյալ կազմակերպության նախորդ հարկային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառության և միացած կազմակերպության կամ կազմակերպությունների նախորդ հարկային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառությունների հանրագումարը:

6. Շրջանառության հարկ վճարողներ չեն կարող համարվել՝

3) բանկերը, վարկային կազմակերպությունները, ապահովագրական ընկերությունները, ներդրումային ընկերությունները, արժեթղթերի շուկայի մասնագիտացված մասնակիցները, գրավատերերը, արտարժույթի առք ու վաճառքի գործունեություն իրականացնողները, ներդրումային ֆոնդերը, ֆոնդերի կառավարիչները, վճարահաշվարկային կազմակերպությունները, խաղատերերի, շահումով խաղերի, տոտալիզատորի և ինտերնետ տոտալիզատորի կազմակերպման գործունեություն իրականացնողները, աուդիտորական կազմակերպությունները.

4) հարկային տարվա ընթացքում հսկիչ դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների երրորդ խախտումը կատարած կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը և նոտարները՝ խախտումն արձանագրելու օրվանից մինչև այդ օրը ներառող հարկային տարվան հաջորդող հարկային տարվա ավարտը.

5) Օրենսգրքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ փոխկապակցված համարվող կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը և նոտարները, բացառությամբ այն դեպքերի, երբ, Օրենսգրքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, նրանց փոխկապակցված կազմակերպությունները և (կամ) ֆիզիկական անձինք հարկային մարմին են ներկայացրել գործունեությունը դադարեցնելու մասին հայտարարություն և հայտարարությունը ներկայացնելու օրվանից հետո, իսկ հայտարարությունում գործունեությունը դադարեցնելու այլ օր նշելու դեպքում՝ այդ օրվանից հետո փաստացի գործունեություն չեն իրականացրել.

6) Օրենսգրքի 30-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ փոխկապակցված համարվող կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը և նոտարները, եթե հարկային մարմնի ղեկավարի որոշմամբ փոխկապակցված ճանաչված առևտրային կազմակերպությունների, անհատ ձեռնարկատերերի և նոտարների նախորդ հարկային տարվա կամ ընթացիկ հարկային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառությունների հանրագումարը գերազանցում է 115 միլիոն դրամը.

7) Օրենսգրքի 31-րդ հոդվածով սահմանված՝ համատեղ գործունեության պայմանագրի, ինչպես նաև ապրանքների մատակարարման՝ կոմիսիայի կամ



ապրանքների մատակարարման՝ գործակալի անունից հանդես գալու պայման նախատեսող գործակալության պայմանագրի կողմ հանդիսացող կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը և նոտարները:

8. Առևտրային կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը և նոտարները համարվում են շրջանառության հարկ վճարող գործունեության բոլոր տեսակների մասով:

9. Խաղարկությունով, ոչ խաղարկությունով և (կամ) համակցված վիճակախաղի (այսուհետ՝ վիճակախաղ) կազմակերպիչ համարվող ռեզիդենտ առևտրային կազմակերպությունը համարվում է և չի դադարում համարվել շրջանառության հարկ վճարող՝ անկախ սույն գլխով սահմանված սահմանափակումներից:

10. Սույն գլխով սահմանված պայմանները չբավարարող (բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով սահմանված դեպքերի)՝ հանրային սննդի ոլորտում գործունեություն իրականացնող ռեզիդենտ առևտրային կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը սույն հոդվածի 1-ին մասով սահմանված դեպքերում և ժամկետներում (բացառությամբ Օրենսգրքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով հարկային մարմին ԱԱՀ վճարող համարվելու և որպես ԱԱՀ վճարող հաշվառվելու վերաբերյալ հայտարարություն ներկայացնելու դեպքի) կարող են համարվել շրջանառության հարկ վճարող սույն հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետներում հանրային սննդի ոլորտում գործունեություն իրականացնելու համար շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հարկային մարմնի հաստատված ձևով հայտարարություն հարկային մարմին ներկայացնելու դեպքում՝ անկախ սույն գլխով սահմանված սահմանափակումներից:

11. Հանրային սննդի ոլորտում գործունեություն իրականացնող շրջանառության հարկ վճարող այն ռեզիդենտ առևտրային կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը (բացառությամբ սույն հոդվածի 6-րդ մասով սահմանված դեպքերի), որոնց տվյալ հարկային տարվա ընթացքում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառությունը գերազանցել է 115 միլիոն դրամը, կամ տվյալ հարկային տարվա ընթացքում տեղի է ունեցել Օրենսգրքի 254-րդ հոդվածի 3-րդ մասի 4-7-րդ կետերում նշված փաստերից որևէ մեկը, իրացման շրջանառության՝ սույն մասով սահմանված չափը գերազանցելու կամ Օրենսգրքի 254-րդ հոդվածի 3-րդ մասի 4-7-րդ կետերում նշված փաստերից որևէ մեկը տեղի ունենալու օրվանից մինչև այդ օրվան հաջորդող 20-րդ օրը ներառյալ հանրային սննդի ոլորտում գործունեություն իրականացնելու համար շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հարկային մարմնի հաստատված ձևով հայտարարություն հարկային մարմին ներկայացնելու դեպքում կարող են այդ օրվանից մինչև տվյալ հարկային տարվա ավարտը (բացառությամբ Օրենսգրքի 59-րդ

հողվածով սահմանված կարգով հարկային մարմին ԱԱՀ վճարող համարվելու և որպես ԱԱՀ վճարող հաշվառվելու վերաբերյալ հայտարարություն ներկայացնելու դեպքի) շարունակել համարվել շրջանառության հարկ վճարող՝ անկախ սույն գլխով սահմանված սահմանափակումներից (բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով սահմանված դեպքերի):

12. Սույն բաժնի կիրառության իմաստով՝ հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեություն է համարվում խոհարարական արտադրանքի օտարումը (այդ թվում՝ առաքմամբ) և (կամ) սպառման կազմակերպումը: Այդ գործունեությունը ներառում է նաև խոհարարական արտադրանքի սպառման կազմակերպման հետ անմիջականորեն կապված ապրանքների մատակարարումը, աշխատանքների կատարումը, ծառայությունների մատուցումը, մասնավորապես սպասարկումը, մուտքի թույլտվությունը:

ՀՀ հարկային օրենքի 255-րդ հոդվածի

1. Շրջանառության հարկ վճարողը դադարում է (բացառությամբ Օրենսգրքի 254-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերով սահմանված դեպքերի) այդպիսին համարվելուց, եթե՝

հայտարարությունում նշված օրվանից (բայց հայտարարությունը ներկայացնելու օրվան նախորդող 20-րդ օրվանից ոչ շուրջ) մինչև հայտարարությունում նշված հարկային տարվա ավարտը. 1) հարկային մարմին է ներկայացրել հայտարարություն՝ նշում կատարելով ԱԱՀ վճարող համարվելու և որպես ԱԱՀ վճարող հաշվառվելու մասին՝

2) ընթացիկ հարկային տարում գործունեության բոլոր տեսակների մասով իրացման շրջանառությունը գերազանցել է 115 միլիոն դրամը՝ գերազանցելու պահից մինչև տվյալ հարկային տարվա ավարտը.

3) տեղի է ունեցել Օրենսգրքի 254-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ, 3-րդ, 5-րդ կամ 7-րդ կետերում նշված փաստերից որևէ մեկը՝ այդ փաստը տեղի ունենալու օրվանից մինչև տվյալ հարկային տարվա ավարտը.

4) տեղի է ունեցել Օրենսգրքի 254-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետում նշված փաստը՝ այդ փաստը տեղի ունենալու օրվանից մինչև այդ օրը ներառող հարկային տարվան հաջորդող հարկային տարվա ավարտը.

5) տեղի է ունեցել Օրենսգրքի 254-րդ հոդվածի 3-րդ մասի 6-րդ կետում նշված փաստը՝ այդ փաստը տեղի ունենալու օրը ներառող հարկային տարվա սկզբից, իսկ եթե հարկ վճարողը պետական գրանցում է ստացել կամ հաշվառվել է կամ որպես նոտար նշանակվել է ավելի ուշ, ապա պետական գրանցման կամ հաշվառման կամ որպես նոտար նշանակման օրվանից: Օրենսգրքի 254-րդ հոդվածի 3-րդ մասի 6-րդ կետում նշված որոշումը դատական կարգով բողոքարկվելու դեպքում առևտրային

կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը և նույնպես շարունակում են համարվել շրջանառության հարկ վճարողներ, իսկ Օրենսգրքի 254-րդ հոդվածի 3-րդ մասի 6-րդ կետում նշված որոշումն անվավեր չճանաչելու վերաբերյալ դատարանի վճիռն ուժի մեջ մտնելու դեպքում փոխկապակցված ճանաչված առևտրային կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը և նույնպես դադարում են համարվել շրջանառության հարկ վճարողներ սույն կետով սահմանված ժամկետից:

2. Սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ, 3-րդ և 5-րդ կետերով սահմանված փաստերից որևէ մեկը տեղի ունենալու օրվանից մինչև այդ օրվան հաջորդող 20-րդ օրը ներառյալ առևտրային կազմակերպությունը, անհատ ձեռնարկատերը կամ նույնը հարկային մարմին է ներկայացնում հայտարարություն՝ նշելով շրջանառության հարկ վճարող համարվելուց դադարելու համապատասխան հիմքը և օրը:

Այսպիսով պայմանավորված անհատ ձեռնարկատերը կամ կազմակերպությունը կարող է անցում կատարել ԱԱՀ-ով հարկման տեսակով հարկման նույնիսկ եթե նախկինում համարվել է միկրոձեռնարկատիրությամբ զբաղվող կամ շրջանառության հարկ վճարող ուստի «ԿՄԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/1» ծածկագրով բաց մրցույթ ընթացակարգի գնահատող հանձնաժողովը գտնում է, որ հայտերը գնահատվել են գործող օրենքներին համապատասխան:»:

#### **4. ԳԲՔԱ-ԼՕ-2021/85 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.**

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. Եղվարդի համայնքապետարանի կողմից Եղվարդ քաղաքի մի շարք փողոցների արտաքին լուսավորության ցանցի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով 19.07.2021թ.-ին հայտարարվել է «ԿՄԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/1» ծածկագրով բաց մրցույթ (այսուհետ նաև՝ Մրցույթ կամ Ընթացակարգ):

ii. Մրցույթին մասնակցելու նպատակով, 1-ին չափաբաժնի մասով հայտ են ներկայացրել նաև «Լայթինգ Ալեք» ՍՊԸ-ն և «Լայն Ափ» ՍՊԸ-ն:

iii. «Լայն Ափ» ՍՊԸ-ն ներկայացրած գնային առաջարկով ներկայացրել է հետևյալ գները.

| Չափաբաժինների համարները | Աշխատանքի անվանումը  | Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) /տառերով և թվերով/ | ԱԱՀ** /տառերով և թվերով/ | Ընդհանուր գինը /տառերով և թվերով/ |
|-------------------------|--|---|--------------------------|-----------------------------------|
| 1                       | 2  | 3   | 4                        | 5=3+4                             |
| 1                       | Եղվարդ քաղաքի մի շարք փողոցների արտաքին լուսավորության ցանցի կառուցում N 1 | 149 259 664   | 29 851 932               | 179 111 596                       |

iv. Մրցույթի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 03.09.2021թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության 3.1 կետի համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է բաց մրցույթի արդյունքում ընտրված մասնակից ճանաչել «Լայն Ափ» ՍՊԸ-ին:

v. [www.gnumner.am](http://www.gnumner.am) համացանցային կայքում 06.09.2021թ.-ը հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն, որի համաձայն անգործության ժամկետ է սահմանվել նույն հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

vi. Բողոքներ քննող անձը 05.10.2021թ.-ին թիվ /ԲՔԱ-ԼՕ/1/16260-2021 գրությամբ դիմել է ՀՀ պետական եկամուտների կոմիտե և խնդրել է հայտնել, արդյոք «Լայն Ափ» ՍՊԸ-ն (ՀՎՀՀ 03557973) հայտը ներկայացնելու օրվա դրությամբ՝ 30.08.2021թ.-ին, հանդիսացել է ԱԱՀ վճարող, թե ոչ, քանի որ [www.petekamutner.am](http://www.petekamutner.am) կայքից 13.09.2021թ.-ին կատարված արտատպման համաձայն Ընկերությունը չի հանդիսանում ԱԱՀ վճարող, իսկ նույն կայքում 04.10.2021թ.-ի առկա տվյալների համաձայն՝ հանդիսանում է ԱԱՀ վճարող:

vii. Ի պատասխան վերոնշյալ գրության, ՀՀ պետական եկամուտների կոմիտե 07.10.2021թ.-ի թիվ /70-15/63041-2021 գրությամբ հայտնել է, որ ՀՀ ՊԵԿ տեղեկատվական բազայում առկա տվյալների համաձայն «Լայն Ափ» ՍՊ Ընկերությունը (ՀՎՀՀ 03557973) 17.09.2021թ.-ին ներկայացրել է հայտարարություն 30.08.2021թ.-ից ԱԱՀ վճարող համարվելու վերաբերյալ:

## **5. Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.**

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացությանը, որ «Լայն Ափ» ՍՊԸ-ի կողմից 15.09.2021թ.-ին ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը չի կարող նույն Մրցույթին ներկայացնել մեկից ավելի հայտ: Մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձին տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Ընդ որում, մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն մասում նշված հարկի գումարի հաշվարկման:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային

առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Եղվարդի համայնքապետարանի կողմից Եղվարդ քաղաքի մի շարք փողոցների արտաքին լուսավորության ցանցի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով 19.07.2021թ.-ին հայտարարված «ԿՄԵՔ-ԲՄԱՇՁԲ-21/1» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 8.9-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հրավերի 8.10-րդ կետի համաձայն՝ եթե սույն հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը

գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն հրավերով սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Ընդ որում, Կարգի 41-րդ կետը ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն գնային առաջարկի համար, այն էլ՝ որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են, ներառյալ եթե մասնակիցը մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն գնահատող հանձնաժողովին չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի երբ բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ Եղվարդի համայնքապետարանի կողմից Եղվարդ քաղաքի մի շարք փողոցների արտաքին լուսավորության ցանցի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով 19.07.2021թ.-ին հայտարարված «ԿՄԵԲ-ԲՄԱՇԶԲ-21/1» ծածկագրով բաց մրցույթին մասնակցելու նպատակով, 1-ին չափաբաժնի մասով հայտ ներկայացած «Լայն Ափ» ՍՊԸ-ն գնային առաջարկով 1-ին չափաբաժնով նախատեսված աշխատանքների կատարման համար որպես ընդհանուր գումար նշվել է 179

111 596 ՀՀ դրամ, որից՝ որպես արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)՝ 149 259 664 ՀՀ դրամ, ԱԱՀ՝ 29 851 932 ՀՀ դրամ:

Մրցույթի գնահատող հանձնաժողովի 03.09.2021թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության 3.1 կետի համաձայն՝ որոշում է կայացվել բաց մրցույթի արդյունքում ընտրված մասնակից ճանաչել «Լայն Ափ» ՍՊԸ-ին, ինչով պայմանավորված [www.gnumner.am](http://www.gnumner.am) համացանցային կայքում 06.09.2021թ.-ը հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն, որի համաձայն անգործության ժամկետ է սահմանվել նույն հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

ՀՀ հարկային օրենսգրքի 59-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ եթե սույն հոդվածի 2-րդ, 2.1-ին և 3-րդ մասերով այլ բան սահմանված չէ, ապա ԱԱՀ վճարողներ են համարվում սույն հոդվածի 4-րդ մասի 1-ին կետին համապատասխան հարկային մարմնում որպես ԱԱՀ վճարող հաշվառված կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը և նոտարները՝ այն դեպքերում և ժամկետներում, երբ հայտարարությունում նշված օրվանից (բայց հայտարարությունը ներկայացնելու օրվան նախորդող 20-րդ օրվանից ոչ շուտ) մինչև հայտարարությունում նշված հարկային տարվա ավարտը, հարկ վճարողը հարկային մարմին է ներկայացրել հայտարարություն՝ նշում կատարելով ԱԱՀ վճարող համարվելու և որպես ԱԱՀ վճարող հաշվառվելու մասին:

Նույն օրենսգրքի 255-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ շրջանառության հարկ վճարողը դադարում է (բացառությամբ Օրենսգրքի 254-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերով սահմանված դեպքերի) այդպիսին համարվելուց, եթե հարկային մարմին է ներկայացրել հայտարարություն՝ նշում կատարելով ԱԱՀ վճարող համարվելու և որպես ԱԱՀ վճարող հաշվառվելու մասին՝ հայտարարությունում նշված օրվանից (բայց հայտարարությունը ներկայացնելու օրվան նախորդող 20-րդ օրվանից ոչ շուտ) մինչև հայտարարությունում նշված հարկային տարվա ավարտը:

Բողոքներ քննող անձը, գործում առկա փաստական հանգամանքները վերլուծության ենթարկելով վերը բերված իրավական նորմերի և դրանց հիման վրա արված մեկնաբանությունների համատեքստում, հանգում է այն հետևության, որ «Լայն Ափ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը համապատասխանում է վերոնշյալ իրավական նորմերի պահանջներին, քանի որ Ընկերությունը՝ գնային առաջարկով տվյալ գործարքի գծով ՀՀ պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշելով՝ գործել է իրավաչափ. Մասնավորապես՝ «Լայն Ափ» ՍՊԸ-ն, իր կողմից վճարման ենթակա ԱԱՀ-ի գումարը նշել է ելնելով ՀՀ հարկային օրենսգրքի 255-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով



սահմանված և վերապահված իրավունքից, այն է՝ շրջանառության հարկ վճարողը դադարում է այդպիսին համարվելուց, եթե հարկային մարմին է ներկայացրել հայտարարություն՝ նշում կատարելով ԱԱՀ վճարող համարվելու և որպես ԱԱՀ վճարող հաշվառվելու մասին՝ հայտարարությունում նշված օրվանից (բայց հայտարարությունը ներկայացնելու օրվան նախորդող 20-րդ օրվանից ոչ շուտ) մինչև հայտարարությունում նշված հարկային տարվա ավարտը: Այսինքն՝ «Լայն Ափ» ՍՊԸ-ի կողմից գնային առաջարկը ներկայացվել է 30.08.2021թ.-ին, իսկ 17.09.2021թ.-ին Ընկերությունը հայտարարություն է ներկայացրել 30.08.2021թ.-ից ԱԱՀ վճարող համարվելու վերաբերյալ:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ, տվյալ դեպքում, «Լայն Ափ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկում ԱԱՀ-ի տողը լրացված լինելը չպետք է գնահատել որպես գնային առաջարկին վերագրվող անհամապատասխանություն, որպիսի պայմաններում գնահատող հանձնաժողովի կողմից «Լայն Ափ» ՍՊԸ-ի հայտը բավարար գնահատելու մասին որոշումն իրավաչափ է և ելնում է Օրենքի 34-րդ հոդվածի և Կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթների տրամաբանությունից:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

## Ո Ր Ո Շ Ե Ց

«Լայթինգ Ալեք» ՍՊԸ-ի կողմից 15.09.2021թ.-ին ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2021/85 ծածկագրով բողոքը մերժել ամբողջությամբ՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

**ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ  
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆԶ՝**

**ԼԵՎՈՆ ՕՇԱՆՅԱՆ**